ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան **12 դեկտեմբերի 2019թ.**
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Ն. Հայրապետյան

Անդամներ՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի խորհրդական՝ Ա. Շատվորյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Շաբոյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ՝ Լ. Միքայելյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ՝ Հ. Շեկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների գործակալ՝ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի նախագահը նիստի ժամանակ բացակայում էր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետը հանձնաժողովի կողմից նիստը համարվեց իրավազոր և սահմանված կարգով վարվեց հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

Հանձնաժողովի անդամը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ) – 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ

«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:

3. Տվյալներ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

4. Տվյալներ՝ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման վերաբերյալ:

5. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

6. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:

1.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են, դեկտեմբերի 09-ին ժամը 12:00-ին:

1.2 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

1.3 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով ԳՀ մրցույթի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N/N	Մասնակցի անվանումը	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե
1	«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	office@pantera.am
2	«Էլ-Էն Գարդ Սիստեմս» ՍՊԸ	arshav1980@mail.ru
3	«Պահապան Գրուպ» ՍՊԸ	pahapang@mail.ru
4	«Ֆիլյոր» ՍՊԸ	info.fileur@gmail.com
5	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՍՊԸ	law@armobile.am info@armobil.am
6	«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	trans.spher@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0:

2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխանության, տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:

2.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների էլեկտրոնային հայտերը Armeps (**www.armeps.am**) էլեկտրոնային համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ.

- «Էլ-Էն Գարդ Սիստեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված էին ոչ տնօրենի, ոչ՛ էլ պատշաճ կերպով լիազորված անձի կողմից:

Հայտերի բացման օրը սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել է և նույն օրը քարտուղարի կողմից մասնակցին է ուղարկվել փաստաթղթի շտկման վերաբերյալ ծանուցում և մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան փաստաթուղթը /Լիազորագիրը/, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0:

3. Տվյալներ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Գնման առարկայի անվանում	Գնման հայտով սահմանված գնման առարկայի գինը	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ)		
			Մասնակցի ներկայացրած գինն առանց ԱԱՀ /ինքնարժեք և շահույթ/	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	5 000 000	4 560 000	365 000	4 560 000
2	«Պահապան Գրուպ» ՍՊԸ		4 740 000	-	4 740 000
3	«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ		4 900 000	980 000	5 880 000
4	«Էլ-Էն Գարդ Սիստեմս» ՍՊԸ		5 200 000	300 000	5 500 000
5	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՍՊԸ		5 880 000	1 176 000	7 056 000
6	«Ֆիլյոր» ՍՊԸ		7 012 440	1 402 488	8 414 928

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և սույն ծածկագրով մրցույթի մաս 1-ի 8.7 կետը՝ հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել էր և **սույն թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 10:00-ին** ք. Երևան, Կառավարական տուն 1, 4-րդ սենյակ հասցեում էլեկտրոնային հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցները հրավիրվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա վարվող բանակցությունների:

Նույն օրը սույն հանձնաժողովի քարտուղարը Armeps (armeps.am) համակարգի միջոցով և հայտ ներկայացրած մասնակիցների էլեկտրոնային փոստերին ծանուցեց գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 Նշանակված օրը ներկայացել էին միայն «ՏՐԱՆՍ ՍՖԵՐ» ՍՊԸ-ի տնօրենը և «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված անձը /համապատասխան Լիազորագիրը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը ներկայացվել է հանձնաժողովի քարտուղարին/:

- Մասնակիցները իրենց գնային առաջարկներում ոչ մի փոփոխություն/նվազեցում չկատարեցին,
- Չներկայացած մասնակիցների գնային առաջարկները հանձնաժողովը որոշեց թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0:

4. Տվյալներ՝ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման վերաբերյալ

4.1 Սույն ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի պահանջները՝ բավարար գնահատեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, որի արդյունքները հանձնաժողովի անդամները արտացոլեցին նախապես տրամադրված գնահատման թերթիկներում:

4.2 Հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին, իսկ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Պահապան Գրուպ» ՍՊԸ-ին:

- Մերժել այն մասնակիցների գնային առաջարկները, որոնք գերազանցում են գնման հայտով սահմանված գնման առարկայի գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

5. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:

5.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

6. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

6.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

6.2 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում, պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6.3 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովումը (մասնակցի գնային առաջարկի չափով) և պայմանագրի ապահովումը (կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով)՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Անդամներ՝	Ա. Շատվորյան	ԳՊ/ԳԱ
	Ա. Շաբոյան	ԳՊ/ԳԱ
	Լ. Միքայելյան	ԳՊ/ԲԱ
	Հ. Շեկոյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀմ